


## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

### ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ



#### Մարզկենտրոնը՝

ք. Եղեգնաձոր

#### Տարածաշրջանները՝

Վայք,

Եղեգնաձոր

#### Քաղաքները՝

Եղեգնաձոր,

Ջերմուկ,

Վայք

Տարածքը	2308 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.8%
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	41
Քաղաքներ	3
Գյուղեր	52
Բնակչության թվաքանակը 2011թ. հունվարի 1-ի դրությամբ	56.0 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	19.3 հազ. մարդ
գյուղական	36.7 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2010թ.	1.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	34.5 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	209260 հա
այդ թվում՝ վարելահողեր	16217 հա

**ՀՀ Վայոց ձորի մարզը** գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավային հատվածում: Մարզը պետական սահմանով հարավում սահմանակից է Նախիջևանին, հյուսիսում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզին, արևելքում՝ ՀՀ Սյունիքի մարզին և արևմուտքում՝ ՀՀ Արարատի մարզին:

**ՀՀ Վայոց ձորի մարզը** շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք, յուրահատուկ բնական պատնեշներ հանդիսանալով նրա և հարևան տարածքների միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն:

**ՀՀ Վայոց ձորի մարզն** ունի կենդանական և բուսական բազմազան աշխարհ: Տարածքի 5.7%-ը կամ 13240.1 հա կազմում են բնական անտառները:

Արտակարգ խայտաբղետ է մարզի մակերևույթը: Հրաբխային ուժերը, երկրաշարժերը, Արփա գետի և դրա վտակների ջրերն առաջացրել են տարբեր ուղղություններով ձգվող բազմաթիվ լեռնաշղթաներ՝ մեծ ու փոքր գագաթներով, խորհրդավոր ձորեր, լեռնանցքներ, սարահարթեր, գոգավորություններ, դաշտեր, մարգագետիններ և բնական բազմապիսի կերտվածքներ, որի ամենավառ օրինակն է Ջերմուկի հիասքանչ ջրվեժը (60 մ):

**ՀՀ Վայոց ձորի** մարզի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Օդի առավելագույն աստիճանը հարավային շրջաններում հասնում է + 41o C-ի, իսկ բացարձակ նվազագույնը՝ -35o C-ի: Տեղումները կազմում են տարեկան 300-ից 700 մմ:

2010թ.-ին **մարզի տնտեսության հիմնական հատվածների** տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 0.8 %,
- գյուղատնտեսություն՝ 2.2 %,
- շինարարություն՝ 0.9 %,
- մանրածախ առևտուր՝ 0.4 %,
- ծառայություններ՝ 0.4 %:

Մարզի **տնտեսության** ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, որի արտադրանքը կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 64.5%-ը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև թռչնաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը:

**Արդյունաբերության** ոլորտում հիմնականում զարգացած են ոչ ոգելից ըմպելիքի՝ <<Ջերմուկ>> հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները:

**Բեռնաուղևորափոխադրումները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի): Մարզով է անցնում Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության հեռանկարային զարգացման գործում: Մարզում ակնհայտ են **ներքին և արտաքին գրոսաշրջության** զարգացման մեծ հեռանկարները:

### **Եղեգնաձոր**

**Եղեգնաձոր քաղաքը** (2010թ. տարեվերջին՝ 8.2 հազ. բնակիչ) համարվում է պատմական Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկը և գտնվում է Երևանից 123 կմ հեռավորության վրա:

**Եղեգնաձոր քաղաքի տնտեսության** ընդհանուր ծավալում գերակշռող ոլորտներն են **արդյունաբերությունն ու շինարարությունը:**

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են խաղողի գինու, էլեկտրասարքավորանքի արտադրությունները, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունները:

### **Վայք**

**Վայք քաղաքը** (2010թ. տարեվերջին՝ 5.9 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 132 կմ, մարզկենտրոնից՝ 16 կմ հեռավորության վրա:

**Վայք քաղաքի տնտեսության** հիմնական ճյուղն **արդյունաբերությունն է:** Հիմնականում զարգացած են հանքային ջրերի և ոչ ալկոհոլային խմիչքների, շինանյութերի, ձեռագործ գորգերի արտադրությունները:


### **Ջերմուկ**

**Ջերմուկ քաղաքը** (2010թ. տարեվերջին՝ 5.2 հազ. բնակիչ) գտնվում է 2070 մ բարձրությամբ լավային սարավանդի վրա (հեռավորությունը Երևանից՝ 175 կմ, մարզկենտրոնից՝ 53 կմ): Ջերմուկը լայն ճանաչում ունի որպես առողջարանային քաղաք: Ճանաչված առողջարաններ են. <<Ջերմուկ>>-ը, <<Նոր կյանք>>-ը, <<Գլաձոր>>-ը, <<Աղաջանյանի անվ. առողջարան>>-ը և <<Արարատ>>-ը:

**Քաղաքի** անվանումը կապված է հանքային տաք աղբյուրների՝ ջերմուկների հետ:

**Ջերմուկ քաղաքի տնտեսության** առաջատար ճյուղը ոչ ոգելից ըմպելիքի, <<Ջերմուկ>> **հանքային ջրի**, արտադրությունն է:

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2011թթ. հունվարի 1-ի դրությամբ



Մանրածախ օբյեկտներ

	Քանակը				
	2006	2007	2008	2009	2010
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	219	220	234	210	265
այդ թվում՝					
խանութներ	129	130	145	120	172
կրպակներ	59	59	59	59	59
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1	1	1	1	1
սպառողական ապրանքների շուկաներ	1	1	1	1	-
առևտրի այլ օբյեկտներ	29	29	28	29	33

Կրթական հաստատություններ

	Քանակը				
	2006	2007	2008	2009	2010
Պետական նախադպրոցական	17	17	17	17	17
Պետական հանրակրթական	51	51	50	51	51
Ոչ պետական հանրակրթական	-	-	1	1	1
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	7	7	7	7	8
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական <sup>1</sup>	-	-	-	1	1
Պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	1

<sup>1</sup> Այստեղ և հետագայում՝ 2009 և 2010թթ. ցուցանիշներում ներառված են նաև այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

	Քանակը				
	2006	2007	2008	2009	2010
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	2	2	2	2	2
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	-	-	1	1	1
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1

**Քաղաքային համայնքներ**

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը՝ մարդ	
		2010թ. հունվարի 1-ի դրությամբ	2011թ. հունվարի 1-ի դրությամբ
Եղեգնաձոր	ք. Եղեգնաձոր	8184	8203
Վայք	ք. Վայք	5912	5928
Ջերմուկ	ք. Ջերմուկ	6226	6225
	ք. Կեչուտ		

**Գյուղական համայնքներ**

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը ** , մարդ	
			2010թ. հունվարի 1-ի դրությամբ	2011թ. հունվարի 1-ի դրությամբ
1	Ագարակաձոր		1357	1391
2	Ագատեկ		564	571
3	Աղավնաձոր		2060	2062
4	Աղնջաձոր		471	473
5	Արենի	• Արենի • Ամաղու	1892	1861
6	Արին		266	281
7	Արտաբույնք		1146	1130
8	Արտավան		313	295
9	Արփի		1227	1229
10	Բարձրունի		401	422
11	Գետափ		2377	2385

\* ՀՀ Վայոց ձորի մարզի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ընթացիկ հաշվառմամբ:

\*\* ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2010թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +5.1%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը **, մարդ	
			2010թ. հունվարի 1-ի դրությամբ	2011թ. հունվարի 1-ի դրությամբ
12	Գլաձոր		2706	2721
13	Գնդեվազ		1007	1005
14	Գնիշիկ	<ul style="list-style-type: none"> <li>• Գնիշիկ</li> <li>• Մոզրով</li> </ul>	212	217
15	Գողթանիկ		214	213
16	Գոմք	<ul style="list-style-type: none"> <li>• Գոմք</li> <li>• Ախտա</li> <li>• Կապույտ</li> </ul>	280	263
17	Ելփին		1305	1348
18	Եղեգիս		511	513
19	Զատիթափ	<ul style="list-style-type: none"> <li>• Զատիթափ</li> <li>• Հորաղիս</li> </ul>	1543	1527
20	Զեղեա		219	210
21	Թառաթումբ		583	549
22	Խաչիկ		1028	1022
23	Խնձորուտ		525	541
24	Կարմրաշեն		289	277
25	Հերիեր		1004	857
26	Հերմոն	<ul style="list-style-type: none"> <li>• Հերմոն</li> <li>• Արատես</li> <li>• Կալասար</li> </ul>	188	192
27	Հորբատեղ		265	263
28	Հորս		307	312
29	Մալիշկա		5316	5324
30	Մարտիրոս		663	670
31	Նոր Ագնաբերդ		166	169
32	Շատին		2041	2045
33	Չիվա		1027	1027
34	Ռինդ		1535	1578
35	Սալլի		252	254
36	Սարավան	<ul style="list-style-type: none"> <li>• Սարավան</li> <li>• Ուղեձոր</li> </ul>	272	255
37	Սերս		222	215
38	Վարդահովիտ	<ul style="list-style-type: none"> <li>• Վարդահովիտ</li> <li>• Գետիկվանք</li> <li>• Սևաժայռ</li> </ul>	236	236
39	Վերնաշեն		1314	1329
40	Փոռ		143	130
41	Քարազուխ		875	851

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻԶՆԵՐ, 2010թ.**

	Ընդամենը	նրանցից	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10000	5006	4994
Ծնվածներ, մարդ	124	60	64
Մահացածներ, մարդ	88	44	44
Ամուսնություններ	54	X	X
Ամուսնալուծություններ	5	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	39.4	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	132	66	66
հանրակրթական	1269	603	666
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան-ստեղծագործական կենտրոններ	149	106	43
նախնական մասնագիտական (արհեստագործական)	8	1	7
միջին մասնագիտական	75	41	34
բարձրագույն մասնագիտական	66	48	18
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	32795	...	...
Մարզիկներ, մարդ	426	75	351
Զբաղվածներ, մարդ	4527	...	...
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	192	146	46
բժիշկներ	20	...	...
միջին բուժանձնակազմ	51	...	...
Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ	179	131	48
Մոցիլայական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1848	...	...
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	391	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	38391	...	...
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	140	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	34	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	22	X	X
միջին ծանրության	6	X	X
ծանր	6	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են: